


Հ Ր Ա Հ Ա Ն Գ

ՎՈԶԻԱՐ ՅԵՎ ԱՅԾ ԽՈՒԶԵԼՈՒ, ԲՐԴԻ
ՆԱԽՆԱԿԱՆ ՏԵՍԱԿԱՎՈՐՄԱՆ,
ՀԱԿԱՎՈՐՄԱՆ ՅԵՎ ՀԱՆՁՆԵԼՈՒ ԳՈՐԾԸ
ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ ՎՈԶԻԱՐԱԲՈՒԾԱԿԱՆ
ՖԵՐՄԱՆԵՐՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հ Ր Ա Հ Ա Ն Գ

ՎՈՋԽԱՐ ՅԵՎ ԱՅԾ ԽՈՒՋԵԼՈՒ, ԲՐԴԻ
 ՆԱԽՆԱԿԱՆ ՏԵՍԱԿԱՎՈՐՄԱՆ,
 ՀԱԿԱՎՈՐՄԱՆ ՅԵՎ ՀԱՆՁՆԵԼՈՒ ԳՈՐԾԸ
 ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ ՎՈՋԽԱՐԱԲՈՒԾԱԿԱՆ
 ՖԵՐՄԱՆԵՐՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ

Մ Ա Ս Ի Ն



ТЕХНИЧЕСКАЯ ИНСТРУКЦИЯ

по стрижке овец и коз, первичной сортировке, упаковке и сдаче шерсти в колхозных О.Т.Ф. в 1937 году.



134489p

Сельхозгиз, Ереван, 1937 г.

1. խուզելու ժամկետը

Կոպտաբուրդ վոչխարների խուզը կատարվում է տարեկան յերկու անգամ՝ զարնանը և աշնանը, բացառությամբ ոռոմանովյան և հյուսիսային կարճապոչ վոչխարների, վորոնք տարեկան 3—4 անգամ են խուզվում: Գարնանն անխաիր խուզվում են վոչխարների բոլոր ցեղերը:

Աշնանը խուզվում են կոպտաբուրդ վոչխարները և ընթացիկ տարվա նրանց գառները: Բացի կոպտաբուրդ վոչխարներից, աշնանը խուզվում են հասակավոր մետիսներն ու նրանց գառները, վորոնք 3-րդ և 4-րդ կարգի բուրդ ունեն: 1-ին և 2-րդ կարգի բուրդ ունեցող մետիսները (թե հասակավորները և թե գառները) աշնանը չեն խուզվում, վորովհետև աշնան խուզի ժամանակ նրանց բուրդն անհրաժեշտ յերկարություն չի ունենում: Գարնան խուզը կատարվում է մայիսի 15-ից մինչև հունիսի 15-ը, նայած շրջանի կլիմայական պայմաններին: Աշնան խուզը կատարվում է ոգոստոս-սեպտեմբեր ամիսներին: Աշնան խուզը չպետք է ուշացնել,

վորովհետև ցրտերը վրա յեն հասնում և ուշ խուզելու դեպքում վոչխորը բավականաչափ չի բրդակալում:

Բոլոր ցեղերի այծերի խուզը կատարվում է տարեկան մեկ անգամ՝ գարնանը:

Անգորական այծերը Միուլթյան հարավային շրջաններում խուզվում են նաև յերկրորդ անգամ՝ աշնանը: Աշնանը կարելի յե խուզել նաև նրանց մատղաշներին, յեթե տվյալ շրջանի կլիմայական պայմաններում ուլերը մինչև ցրտերն ընկները կարողանան լավ բրդակալել:

2. մինչև խուզելը

Առաջադրանքներ վրայի բրդի պահպանումը

Մսուրային խնամքից արոտային շրջանին անցնելուց առաջ բոլոր վոչխարներին պիտի գննել և, բուրդն արոտատեղերում թափվելուց խուտափելու համար, կախ ընկած կոտորտանքը վրայից հավաքել կամ խուզել: Նույն բանը շարունակ պետք է անել նաև մինչև հիմնական խուզն սկսվելը: Մերինոսների բուրդն աղբից և կեղտից պահպանելու համար, արոտի հանելուց մեկ ամիս առաջ նրանց պոչի, պոչարմատի, հետևի վոտքերի ներսի մասերը պետք է խուզել, իսկ մաքիների նկատմամբ՝ նաև կրծի շուրջը և ծնելուց մի ամիս առաջ:

Ծնի մաքիների կրծի շուրջը խուզելիս զգուշ պիտի լինել, վոր պտուկները չվիրավորվեն և վիժում չառաջանա: Միաժամանակ, ճմռան ընթացքում պետք է խուզել մերինոսների աչքերի շուրջը յերկարած բուրդը, վոր աչքերը լավ տեսնեն:

3. վախարներին խուզել

Միմիայն չոր վիճակում

Խուզը պիտի կատարել կայուն, չոր յեղանակներն սկսելուց: Յեթե այդ ժամանակ գիշերները ցող կամ մառախուղ է լինում, խուզվող վոչխարներին պիտի անել շենքի մեջ, վորի հատակին նախապես պետք է փռված լինի չոր ծղոտ: Վոչխարներին խուզի թողնել կերակրելուց և ջրելուց 10 ժամ հետո: Խուզը պիտի կազմակերպված լինի այն հաշվով, վոր վոչխարները խուզի տեղում 4—6 ժամից ավելի չմնան:

4. խուզի համար անհրաժեշտ

Ինվենտարն ու նյութերը

Խուզն առանց ձգձգումների կատարելու համար անհրաժեշտ է պատրաստել հետևյալ ինվենտարն ու նյութերը.

ա) մկրատ՝ յուրաքանչյուր խուզողին մեկական հատ և 10 % էլ ավելի՝ կոտրվածները փոխարինելու համար:

բ) նիշնշելու ներկ (չոր)՝ հաշված 1000 գլխին 12 կիլոգրամ.

գ) ոլիֆ կամ նավթ՝ յուրաքանչյուր 1000 գլխին 16 կիլոգրամ.

դ) պարան՝ հակեր լցնելու ժամանակ առատադից կախելու համար՝ յուրաքանչյուր հարյուր խուզողին 40—50 մետր.

ե) բարդան կարելու թել (շպաղատ)՝ յուրաքանչյուր 1000 վոշխարին 10 կիլոգրամ.

զ) յերկու սրոց՝ մկրատ սրելու համար.

է) յերկու կոմպլեկտ խարան (տավրո)՝ հակեր նիշնշելու համար.

ը) մետաղե ցանց կամ փայտե բազրիք (ճաղ)՝ յերկու տեսակավորողին 15 ֆւ-ի չափով.

թ) սեղանի տախտակ՝ յուրաքանչյուր խուզողին 1 քառակուսի մետր.

ժ) կշեռք՝ բուրդ կշռելու համար.

ժա) կողով՝ բրդի կտորտանքի համար: Բահ և ափել՝ խուզողների թվի համապատասխան.

ժբ) տարա (բարդան)՝ ամբողջ բրդի համար:

Ճ. Խուզելու համար ցեմի նախապատրասելը

Վոշխար խուզելու շենքը պիտի լինի ազատ, լուսավոր, մաքուր, կից ունենա խուզի սպասող ու խուզված վոշխարների տեղ: Փոքր ՎԱՅ

խուզի համար համապատասխան շենք չեղած դեպքում, հանդարտ և քամի չեղած յեղանակներին թույլատրվում է խուզը կատարել բացօթյա:

Նախքան աշխատանքն սկսելը, խուզի տեղը ցամքարից, աղբից ու կեղտից լավ մաքրված, հատակը հավասարեցրած և ախտահանված պետք է լինի: Խուզելու շենքը կահավորված պետք է լինի խուզի սեղաններով՝ սովորական 0,5 մետր բարձրությույն ունեցող շարժական վոտքերի վրա դնելով հղիված տախտակներ: Խուզը թույլատրվում է տախտակի կամ հողե հատակի վրա, վերջինիս վրա նախապես փռելով բրեզենտ կամ իրար կարած մեշոկներ:

Բրդի տեսակավորման համար պիտի լինեն սեղաններ, վորոնք մետաղե ցանցեր են՝ ամրացված փայտե շրջանակների և դրված 0,7—0,9 մետր բարձրությույն ունեցող փայտե վոտքերի վրա: Ցանցի անցքերը պիտի լինեն 1,5—2 քառ. սմ: Մետաղե ցանց չլինելու դեպքում տեսակավորման սեղանի յերեսը նեղ-նեղ տախտակներից է արվում: Տեսակավորման սեղանի տակ տախտակ կամ մեշոկ փռել՝ բրդի կտորտանքը արորելուց պահպանելու համար:

**6. Տարբեր խմբի վոչխարների
խուզելու հերթականությունը**

Բրդի տեսակավորումը հեշտացնելու և խուզողների արտադրանքի նորմաների կատարումն ստուգելու համար, անհրաժեշտ է վոչխարները խուզել ըստ ցեղի, սեռի և հասակի: Առաջին հերթին խուզվում են կոպտաբուրդ վոչխարները, հետո՝ մետիսները, իսկ վերջում՝ մերինոսները: Յուրաքանչյուր ցեղի ամորձատաները, ստերշներն ու մատղաշներն առաջին հերթին են խուզվում, վոր աշնանը մասմթերման հանձնելու ժամանակ նրանց աշնանային խուզը չուշանա: Այդ խմբերի խուզի ժամանակ առաջին ուրերը պետք է ստուգել խուզողների վորակը և սովորեցնել քիչ փորձառություն ունեցող խուզողներին: Ծնած մաքիներին վերջում են խուզում:

7. Վարակիչ հիվանդ վոչխարների խուզը

Քոսոտ վոչխարներին խուզել առողջ վոչխարներից առանձին շենքում: Նրանց խուզը պետք է հանձնել խուզողների առանձին խմբերի: Քոսով սաստիկ վարակված հոտերը պետք է խուզել մյուս հոտերից 5—10 ուր առաջ: Քոսոտ վոչխարներին ավելի շուտ խուզելը հնարավորություն է տալիս հակաքոսային լողացումներն ավելի շուտ կատարել, և արածեցնելու ժամանակ

բրդի կորուստ տեղի չի ունենում: Ծաղկով և սպիտակ փորվածով հիվանդ հոտերի խուզը պետք է կատարել առողջ հոտերից առանձին, վոր վարակն առողջների մեջ չտարածվի: Հիվանդ հոտերը խուզելուց հետո գուլքն ու հագուստն անպայման պետք է ավտահանել կարբոլյան թթվի կամ կրեոլինի 5%-յա լուծույթով: Ծենքերը նյունպես պետք է հիմնովին ավտահանվեն:

8. Խուզը

Վոչխարը խուզի վայրը տանելու համար պետք է բռնել վոչխարի վոչ թե բրդից, այլ վոտքից: Խուզի ժամանակ վոչխարներին չպետք է վիրավորել, տրորել ու սեղմել, այլև մեջքի վրայով նրանց շուռ չտալ մյուս կողքի վրա, քանի վոր աղիքների վորորում կարող է առաջանալ: Խուզի ժամանակ խուզողը վոչխարին կողքի վրա պառկեցնում և ձախ ձեռքով բռնելով նրա գլուխն ու առջևի վոտքերը՝ հետևի վոտքով սեղմում է հատակին, վորից հետո սկսում է խուզը:

Խուզն սկսել վոտքերից, հետո անցնել կրծքին և վորին, հետո խուզել գլուխն ու վզի մի մասը, վորից հետո բուրդը հանվում է: Խուզողներից պահանջել, վոր խուզելու ժամանակ բրդի ամ-

բողջութիւն պահպանվի: Բուրդը պետք է խուզել միանգամից և ամբողջ յերկարությամբ: Խուզելու ժամանակ յերբեք շարքը շարքից բարձր ու ցածր չխուզել և բարձր տեղերը յերկրորդ անգամ չկտրել, վորովհետև այդ միանգամայն կորստաբեր է, և մանր բուրդն ընկնելով խոշորի մեջ՝ փչացնում է այն, վատացնելով բրդի մանվածքի ու գործվածքի վորակը: Առանձնապես զգուշ պետք է լինել, վոր մաքիւնների պտուկները չվերափորվեն և նրանց շուրջը յեղած բուրդը խուզելիս պտուկները ձեռքով պետք է ծածկել: Նույն բանը պիտի կատարել վոչ միայն հասակավոր մաքիւնների նկատմամբ, այլև շիշագների, վորոնց պտուկները բրդի մեջ լավ չեն յերևում:

9. Վոչխարների խնամքը խուզելուց հետո

Խուզելուց հետո վոչխարները հանձնվում են հովիվներին, վորոնք նրանց կտրվածքներին դեղ են քսում, իսկ յեթե վորդեր կան, մաքրում են, յերկարած կճղակները կտրում են և ընդհանրապես կենդանուն կատարյալ տեսք են տալիս: Կտրվածքներին սովորաբար կրեոլինի 20% յա լուծույթ, կամ վորևե այլ ախտահանիչ նյութ են քսում և նափտալին ցանում: Խուզելուց անմիջապես հետո վոչխարները, առանձնապես լեռ-

նային ցուրտ շրջաններում, յենթակա յե մրսելու և հիվանդանալու, այս պատճառով ել սկզբէնական շրջանում ավելի լավ է փարախներից հեռու չտանել, վոր կարիք յեղած դեպքում հնարավոր լինի նրանց ներս անել: Վոչխարներին խուզելուց 3 ժամ հետո պետք է ջրել:

10. Բրդի սեսակավորումը

Յերբ խուզողը խուզած վոչխարը դուրս է բերում, բուրդ հավաքողը բուրդը տանում է տեսակավորելու: Դրանից հետո բրդի բոլոր մանրուկները խնամքով հավաքվում ե: Խուզելու տեղի ցամքարը, աղբն ու այլ մնացորդները մաքուր ավլում են: Խուզելու և տեսակավորելու տեղը շատ մաքուր պետք է սրբել, յերբ կոպտաբուրդ վոչխարներից հետո մերինոսները կամ նրանց մետիսներն են խուզվում: Խուզից հետո բուրդը բաժանում են տեսակների, համաձայն մթերման ստանդարտի: Տեսակավորման նպատակն է՝ ամբողջական բուրդը բաժանել հիմնական, գերակշռող տեսակների: Ամբողջական բուրդն առանձին մասերի բաժանել չի թույլատրվում:

Տեսակավորումը կատարվում է հատուկ ցանցավոր սեղանների վրա, վոր բրդի մանրուկները

և կողմնակի խառնուրդները ցանցի միջով թափվեն սեղանի տակ: Սեղանի վրա ամբողջական բուրդը դրվում է խուզած կողմը դեպի ցած: Տեսակավորողներն առանձնացնում են բրդի մանրունքը, կեղտոտ մասը, բուսական մնացորդները և այլն: Հետո ամբողջական բուրդը փաթաթվում է ափսեպս, վոր ներսի մասը դուրս ընկնի, իսկ դրսինը՝ ներս, ըստ վորում հետևի մասը կիսից ծալվում է դեպի ներս, հետո վրա յե բերվում առաջին մասը, վորից հետո յերկու կողերից փաթաթվում է դեպի կենտրոն: Բրդի յերկու ծայրը վորորում և անց են կացնում տակը, վոր փաթեթը չբացվի, և այդ վիճակում դարսում են մեշոկների մեջ: Ինչ վերաբերում է կենդանիներին տարբեր ցեղերի և տեսակների բրդին, այն տեսակավորում են առանձին: Նուրբ, կիսանուրբ և կոպիտ բրդերը տեսակավորում են համաձայն մթերման ստանդարտների: Հանձնվող բուրդը չպիտի ցեցը տված ու թրջված լինի, վորովհետև այդպիսի բուրդը չի ընդունվում: Նույնպես չի թույլատրվում տարբեր տեսակի (մերինոս, կոպիտ և մետիս) բրդեր իրար խառնել:

11. Հանձնվող բրդի փրակը

Հանձնվելիք բուրդը պիտի լինի լավորակ, և ցեցը տված, մզված, ալրված, թրջված, նախա-

պես գործածված, արձեստականորեն աղբոտած, ստակած վոչխարներից խուզված չլինի. քաշից 15 % ավելի բուսական (կոռտուկի, խողուկի) մնացորդներով աղտոտված լինելու դեպքում բուրդը չի ընդունվում: Բուսական մնացորդները բրդի քաշի մեջ մինչև 15 % լինելու դեպքում հանձնվելիք բրդի քանակի վերաբերյալ կատարվում է քաշի համապատասխան իջեցում:

Բուսական մնացորդներով (կոռտուկի, խողուկի) կեղտոտված բուրդն անպայման առանձնացվում է նորմալ բրդից: Գարնան խուզած բուրդը հանձնվում է ամբողջական բրդերով: Արգելվում է տարբեր տեսակի (մերինոս, մետիս, կոպիտ, գործարանային, լինկա և այլն) բրդերն իրար խառնել:

Բրդի կտորտանքը՝ հանձնվելիք՝ դարնան կոպիտ բրդի, ինչպես և III և IV կարգի մետիսների գարնան բրդի ընդհանուր քանակի մեջ 7 % -ից ավելի չպետք է կազմեն: Մերլինոսների ու մետիսների I և II կարգի բրդի պարտիաներում ցածր տեսակի բրդի (գնջիկի, պոչի շրջակայքի, վոաքերի) քանակը հանձնվելիք ընդհանուր բրդի քանակի 10 % -ից ավելի չպետք է կազմի:

Այն շրջաններում, վորտեղ 1936 թվից բրդի մթերման ստանդարտ և առևտրամթերման կլա-

սիֆիկացիա յե մտցված, բրդի հանձնումն ու ընդունումը կատարվում է ստանդարտի և առևտրամթերման կլասիֆիկացիայի համաձայն:

Այն անձինք, վոր հանձնվելիք բուրդն արհեստականորեն կաղբոտեն, կփչացնեն կամ հանձնվելիք բարձր տեսակի բուրդը չեն հանձնի, մթերման կայանը նրանց պատասխանատվության կկանչի:

Պետությանը բուրդ հանձնելու պարտավորությունը համարվում է կատարված այն դեպքում միայն, յերբ մթերողը բուրդը հանձնում է ընդունման կայանին:

Նրբաբուրդ վաշխարների բուրդը հանձնվում է ըստ մաքուր յելքի տոկոսի: Համաձայն ԽՍՀՄ Մթերման կոմիտեյի 1936 թ. վորոշման, բրդի մաքուր յելքի փաստացի տոկոսը սահմանված քանակից ավելի բարձր լինելու դեպքում անվա բրդի հանձնման նորման իջեցվում է, իսկ մաքուր յելքի փաստացի տոկոսը պակաս լինելու դեպքում նորման բարձրացվում է:

Անվա բրդի մաքուր յելքի փաստացի տոկոսը վորոշում է ընդունողը մթերման կայանում:

Յերբ բուրդ հանձնող կոլտնտեսությունը համաձայն չե բուրդ ընդունողի վորոշած մաքուր յելքի տոկոսին, այդ դեպքում տվյալ պար-

տիայից մի քանի բուրդ է ընտրվում, վորը բնորոշ կլինի բրդի հնդհանուր պարտիայի համար, և ուղարկվում պետական վորակավորման տեսչին: Յերբ մերինոս վոշխարի բրդի վիճելի պարտիայի քանակը յերկու տոննից անցնում է, պետեսուչը հեռագրով կանչվում է մթերման կայան՝ բրդի մաքուր յելքի տոկոսը տեղում վորոշելու համար:

Պետեսուչի սահմանած անվա բրդի մաքուր յելքի տոկոսը պարտադիր է յերկու կողմերի համար եր: Պետեսուչին ուղարկած բրդի նմուշները հաշվվում են տվյալ կոլտնտեսությունից պետությանը պարտադիր կարգով հանձնվելիք բրդի պլանի դինաց:

12. Բրդի հակավորումը

Յեվ հակերի նիշումը

Մանր և կեղտոտ կտորներից մաքրած ամբողջական բուրդը հակավորվում է բարդանների մեջ: Բուրդը հակավորվում է անմիջապես, խուզելու ժամանակ, վորի համար բարդանը չորս ծայրից պարանով կախում են առաստաղի դեռանից, հակավորողը մտնում է բարդանի մեջ, բուրդը կանոնավոր շերտերով դարսում և յուրաքանչյուր յերկու շերտից հետո այնպես է

տրորում, վոր հետո, յերբ բարդանը լցվում է, յերեսի վրա վոչ մի խորդուբորդություն չի լինում: Թե բրդի խուզը և թե հակավորումը պետք է կատարել առանձին, ըստ

ա) բրդի տեսակների (կոպիտ, նուրբ, կիտակոպիտ),

բ) խուզի ժամանակի (գարնան, աշնան),

գ) գույների (սպիտակ, սև, գունավոր),

դ) կարգերի,

ե) մերինոսի բուրդը հակավորվում է ըստ ունի և կարգի: Վորքերի, պոչի և կեղտոտ բրդի կտորներն առանձին են հակավորվում:

Ստաիվ հետևել, վոր մերինոսի բրդի մեշուկների մեջ մետրիսների և, մանավանդ, կոպտաբուրդ վոչխարների բուրդ չընկնի: Սև և գունավոր բրդերն անալայման առանձնացնել սպիտակից և յուրաքանչյուրը հակավորել առանձին, համաձայն զագոտատանդարտի: Բրդի հակավորումը կատարվում է հատուկ բարդանների մեջ, վոր նախորոք բաց են թողնում մթերոդները, համաձայն ՎԱՖ-ի պահանջի: Հակերի նիշնշումը կատարվում է համաձայն հետևյալ սահմանումների. հակի մի յերեսի 1-ին տողի վրա գրվում է ֆերմայի համարը կամ անունն ու շրջանը, 2-րդ տողում՝ հակի №-ը, 3-րդ տողում՝ բրդի տեսակի

համառոտ անունը (սորոր և գույնը), 4-րդ տողում՝ բրդի հակի քաշը բրուտո (մեշուկով)՝ կիլոգրամներով, 5-րդ տողում նշվում են բրդի պակասությունները (ծաղկով, քոսով հիվանդ, և այլն)

Ո Ր Ի Ն Ա Կ

О. Т. Ф. „Интернационал“ — района Армянской ССР

№ 17

Балбас белый, рунная первый класс.
80 килограммов

Նիշնշումը կատարել անալայման ուղևորին լիզվով:

13. Բրդի պահպանումը

Անհրաժեշտ է հենց խուզի սկզբից միաժամանակ կազմակերպել նաև բրդի հանձնումն այն հաշվով, վոր խուզի վերջին բրդի հիմնական մասն արդեն ուղարկված լինի ընդունման կետը:

Յերբ վորեւ պատճառով հնարավոր չէ բուրդը ուղարկել, պետք է պահել հրդեհից ապահով շենքերում, ամենից լավ է՝ քարե շենքերում: Շենքը բավականաչափ չոր և բուրդը խոնավանալու հնարավորությունից միանգամայն զուրկ պետք է լինեն: Հակերի առաջին տողի վրա պետք է լինեն:

դարսել հաստ տախտակների վրա և պատին չկպցնել:

14. Բրդի հանձնումը

Համաձայն 1936 թվի համար ԽՍՀՄ Ժող-կոմխորհին կից Մթերման կոմիտեյի հաստատած գների և ԽՍՀՄ թեթև արդյունաբերության Ժող-կոմատի հաստատած բրդի մթերման հրահանգի, ՎԱՖ բուրդը հանձնում են Սոյուզգագոտչերստի կամ Սպառկոոպի մթերման կետերին:

15. Վոչխարների բրդի անհասական հաշվառումը

Վոչխարների բրդի անհատական հաշվառումը կատարվում է.

ա) տոհմային այն բոլոր կենդանիների նկատմամբ, վորոնք գրանցված են ՇՏ և ՊՏ գրքերում.

բ) այն վոչխարների նկատմամբ, վորոնք չնայած չեն գրանցված ՇՏ և ՊՏ, բայց առանձնացված են տոհմային ելիս խմբերի կամ 1-ին կարգի, կամ, ըստ հնարավորության, այլ կարգի վոչխարների.

գ) պլանային՝ լավացնող ցեղի բոլոր արտադրողների նկատմամբ վոչխարաբուծական ֆերմաներում վոչխարների բրդի անհատական հաշվառումը կատարվում է հետևյալ ձևով:

Ա. Ա.	Խուզի ժամանակը	Կենդանու Ա. ըստ ՊՏԳ	Կենդանու անհատական Ա.	Ս ե ո ը	Տ ա ը Է Բ	Ց ե ղ ը	Կենդանու քաշը	Խուզված բրդի քաշը	Մանրթուփյուն

Մանրություն 1. Ամբողջական բրդերն անպայման պետք է կշռվեն ավսեյավոր կշեռքներով:
2. Բուրդը նշված ձևով հաշվի առնելու ցուցակներն անմիջականորեն պատրաստում են տեղերը:

16. ՇՏ գրքում, ՊՏ գրքում, ինչպես յեվ ելիս վոչխարների կենթոնմական մասյանում գրանցվելիք վոչխարների բրդի անհասական հաշվառումը

1. Այն վոչխարները, վոր տարեկան մեկ անգամ են խուզվում, պետք է խուզել նախորդ խուզից ուղիղ 12 ամիս հետո, նշելով խուզի ժամանակը:

Տարեկան յերկու անգամ խուզվող վոչխարների նկատմամբ անհրաժեշտ է յուրաքանչյուր անգամ խուզի մատյանում բրդի քանակը ցույց տվող թվից հետո նշել նախորդ և ներկա խուզերի ամիս-ամսաթիվը

2. ՇՏԳ և ՊՏԳ համար նախապես ընտրված կամ գրանցված վոչխարների խուզը յուրաքանչյուր հոտում պետք է կազմակերպվի մնացած վոչխարներից առանձին:

3. Խուզը կատարվում է համաձայն ՀԺԿ-ի հաստատած՝ վոչխարների խուզի ընդհանուր հրահանգի կանոնների, լրիվ ապահովելով խուզի տեխնիկական կողմը (հավասար խուզ, բրդի ամբողջության պահպանում և այլն): Այս իսկ տեսակետից էլ տվյալ վոչխարների խուզը պիտի հանձնարարել ավելի հմուտ հովիվներին:

4. Բրդի «թիակի» նմուշներ վերցնելը:

Յուրաքանչյուր վոչխարի թիակից, վոր ՊՏԳ տեսուչը ներկայացնում է ելիտ վոչխարների կենտրոնական տոհմային գրքում գրանցելու համար, զոոտեխնիկի պատասխանատվությամբ, բրդի նմուշներ պետք է վերցվեն հետևյալ կերպ. թիակի նմուշը խուզվում է վոչխարների խուզի ընթացքում (բայց վոչ մի դեպքում խուզված ամբողջական բրդից)՝ վորպես մի ուղղանկյուն,

վորի քաշը պետք է լինի մոտ 100 գրամ: Նրմուշը վերցվում է թիակի կատարի հետևի մասից (վորտեղ բնիտիրովկայի ժամանակ բուրդը գնահատվում է), մեջքի և վորովայնի գծի հավասար հեռավորության վրա, դուրս չգալով ամբողջական բրդի ալդ հիմնական սորտիմենտից: Բրդի ընտրված նմուշն ամուր փնջի պես փաթեթում են թղթի մեջ, յերկու միանման պիտակ գրում համապատասխան նշումներով, վորոնցից մեկը գնում են նմուշի մեջ, իսկ մյուսը փակցնում փաթեթի վրա: Յուրաքանչյուր նմուշի փաթեթի վրա նշումներ է կատարվում 7-րդ կետում մատնանշված ձևի համաձայն: Թիակի նմուշները տրվյալ տնտեսության հաշվին ու գնահատած ծանրոցներով հանձնվում են փոստին՝ հետևյալ հասցեյով, Москва, 139, Орликов переулок 111, Наркомзем СССР, Главное управление животноводства

5. Տոհմային գրքում գրանցվող վոչխարների ամբողջական բուրդը միառմի կշռվում է հետևյալ կերպ.

ա) ՇՏԳ և ՊՏԳ գրանցվող կենդանիների ամբողջական բուրդը (բացառությամբ այն վոչխարների, վորոնք գրանցվելու յեն ելիտ վոչխարների կենտրոնական տոհմային գրքում) կշռվում է առանց փնջիկի և փոքրերի բրդի, վոր առանձին է կշռվում:

Բրդի քանակը սահմանելիս զննիչը հաշվի չի առնվում: Խուզված բուրդը հաշվի չի առնվում համաձայն 7-րդ կետում նշված ձևի:

բ) այն վոչխարների ամբողջական բուրդը, վորոնք ներկայացվում են կենտրոնական տոնմային գրքում գրանցելու համար, ի տարբերություն խուզի համար ընդհանուր հրահանգով և մթերման ստանդարտով նախատեսված ամբողջական բրդեր հավաքելու կանոնների, կտորտանքից ու ճակատի բրդից չի ազատվում: Ամբողջական բուրդը բոլոր այդ բրդի հետ փաթաթվում է, սակայն առանց վոտքերի բրդի և գրնջիկների, հրահանգով սահմանված կանոնների համաձայն, բարակ պարանով խաշած կապվում է, վորին և ամրացվում է 10 սմ $\times$ 4 սմ չափի փայտե պիտակ, վորից հետո կապած ամբողջական բուրդը, ինչպես և վոտքերի բուրդն ու զննիչն առանձին-առանձին կշռվում են: Ամբողջական բուրդը փաթաթելու ժամանակ մեջը դրվում է նուշնպիսի յերկրող պիտակ: Պիտակի վրա քիմական մատիտով նշումներ են կատարում հետևյալ ձևով (անպայման ռուսերեն լեզվով).

1. Республика, район;
2. Наименование хозяйства;
3. № животного (индивидуальный и ГПК);
4. Пол;
5. Год рождения;
6. Размер настрига (на ярлике, прикрепленном к бечевке, связывающей руно).

6. Ամբողջական բուրդը կշռվում է ափսեյափոր և ճիշտ կշեռքով: Վոտքերի բուրդն ու գրնջիկները կշռվում են ամբողջական բրդից առանձին-առանձին:

7. Ելիս վոչխարների կենտրոնական գրքում գրանցվելիք վոչխարների ամբողջական բրդի արդյունքները հաշվի չեն առնվում առանձին, հետևյալ ձևով:

Наименование хозяйства

Республика _____ район _____ селение _____

№№ животных		П о р о д а		Г о д р о ж д е н и я	В е с ь в г р а м м а х					К л о к е р
Индивидуальный	ГПК	П о р о д а	П о л		Руно с обором	Обножка	Лопаточный образец	Охвостье	Всего шерсти (настр.)	

Ծանոթություն «Պոչի բուրդի բուրդ» սյունակում գրանցվում է ընթացիկ տարվա տոնմային խմբի վոչխարների հիշյալ բրդի փաստացի միջին քանակը:

Տարի _____ ամիս _____ ամսաթիվ _____

- Ստորագրություններ՝
1. Զոտեխնիկ՝
 2. Բուրդ կշռող պատասխանատու անձ՝
 3. Ֆերմայի վարիչ՝

30

8. Կենտրոնական գրքում գրանցվելիք ելիտ
վոչխարները բոլոր գրանցումներից հաշվառվում
և 3 որինակից և ձեռնարկված համապա-
տասխան ստորագրություններով ուղարկվում են՝
մեկ որինակը ԽՍՀՄ Հողօրդրոմատի անասնա-
պահական գլխավոր վարչության, մյուսն ամ-
բողջական բրգերի հետ դրվում են տվյալ ամ-
բողջական բրգի փաթեթի մեջ և փոստային ծան-
րոցով նույնպես ուղարկվում են ԽՍՀՄ ՀԺԿ
անասնապահական գլխավոր վարչությանը, իսկ
յերրորդ որինակը պահվում է անտեսության
մոտ:



Թարգմ. Լ. Բուրբեկյան

Սրբագրիչ՝ Գ ա ռ . Հ ա կ ո ղ յ ա ն

Տեխ. խմբ. Ս. Ա յ վ ա ղ յ ա ն

Գրավոր լիազոր № 1181, հրատ. 430, պատ. 447, տիրաժ 1000

Հանձնված է արտադրության 8 մայիսի 1937 թ.

Ստորագրված է տպագրելու 19 մայիսի 1937 թ.

Գյուղհրատի տպարան, Յերևան, Նալբանդյան 11

ՀՀ Ազգային գրադարան



NL0927879

4025 30 409.

273

1

3478

7 ИЮН. 1937



ТЕХНИЧЕСКАЯ ИНСТРУКЦИЯ
по стрижке овец и коз, пер-
вичной сортировке, упаковке
и сдаче шерсти в колхозных
О.Т.Ф. в 1937 году.

Сельхозгиз, Ереван, 1937 г.